

Հայոց: Եւ ի յառաջնորդութեան մերոյ աթոռոյ սուրբ ուխտիս Ամենափրկչի Յակոբ վարդապետի եւ իշխանութեան՝ մերոյ գեղալայ Քաղաքիս Զուգայոյ Պարոն Սարփրազին: Եւ ի թագաւորութեան Պարսից մանկազոյն Շահապասին, կարմիր զլխոյ, զոր աչք աստուած հաստատուն պահէ ամէն»:

Դարձեալ տարի մը վերջ նոյն հաւաքածոյի թիւ 585 թղթեայ Դաւթի Սաղմոսարանին եւ ժամագիրքին զլխաւոր յիշատակարանը կ'ըսէ.

«Փառք... զրեցաւ... ի թագաւորութեան Պարսից փոքր Շահապասին ի յերկիրս Ըսպահան ի գեղալ Զուգայ եւ յառաջնորդութեան մերոյ Զուգայի Պարոն Խօջայ Սարփրազին եւ որդին եւս, ընդ հովանեաւ Սր. Աստուածածնիս...»:

Ու եւ ԴԸ (1649) թուականին, իսկ շատախօս զրիչը մոռցած է իր անունը յիշել:

Նոյն տարին զրուած է նաեւ երկրորդ ձեռագիր մը, նոյն այդ հաւաքման թիւ 580 ձառնը, երկսուն, թղթեայ, բոլորգիր, ուր կան հետեւեալ տողերը.—

«Փառք... ի թուականութեանս հայոց տումարի Ռ եւ ԴԸ (1649), զրեցաւ աստուածախօս մատեանս որ կոչի ճաշու գիրք ի թագաւորութեան Պարսից Փոքր Շահապասին ի յերկիրս Ըսպահան ի գեղալ Շեղսապան. եւ յառաջնորդութեան մերոյ Զուգայի Պարոն Խօջայ Սարփրազին ընդ հովանեաւ Սր. Աստուածածնիս»:

Ֆրա Պաղաղար, Սուրբ Մարիամի Կարմեղեանը, Օգոստոս 9, 1653-ին Սպահանէն կը տեղեկագրէ.

«Մենք շատ բարեկամութիւն կը գտնենք Զուգայի զլխաւորէն, Սարփրազ կոչեալ, որ իր տունը ունի կից անոնց (Կարմեղեանց) բնակարանին... բարիքներ կ'ընէ Պապին Կարմեղեան Հայրերուն, որպէս զմեզ կը կոչեն հոս...»: (53)

Իսկ ատկէ քանի մը շաբաթ վերջ կ'իմացընէ.

«Յայժմ կացութիւնը լաւ կ'երթայ Զուգայի մէջ, պաշտպանութեան ներքեւ Սարփ-

րազին, թէեւ եպիսկոպոսը եւ քահանաները ցոյց կուտան ինչ որ ընդդիմութիւն եւ զբոսաւորութիւններ կը յարուցանեն...» (Անդ):

Ֆրա Պաղաղարի 3 գեղեմներ, 1653 թուակիր նամակը կ'իմացնէ Հոռմ, թէ Հայերը Զուգայի մէջ կ'ընդդիմանան Յիսուսեաններուն տուն հաստատելուն, թէեւ անոնք հրովարտակ ունին Շահէն, «մինչ մեր (Կարմեղեան) Հայրերը, որոնք մասնաւոր թոյլտուութիւն կամ ատանձնաշնորհում չունին Զուգայ բնակելու, ցայժմ խաղաղ թողուած են հոն քաղաքին զլխաւորին (Սարփրազ Պէկ) շնորհիւ: Ֆրա Տիմաս, որ այնքա՛ն լաւ քարոզիչ էր Հայոց, բարի օրինակ մը թողուց եւ Սարփրազ շատ կը սիրէր զայն» (Անդ՝ էջ 379):

Զուգայի նոյն հաւաքածոյի թիւ 421 փոքրաթիւ թաւապատ, թղթեայ, բոլորգիր, աւետարանի վրայ զրուած է. «Ի թուականութեան Հայոց ՌՃԳ (1654) եւ ի կաթողիկոսութեան տեառն Փիլիպպոսի. եւ արհի-եպիսկոպոսութեան մերոյ Տէր Դաւթի: Եւ ի թագաւորութեան Պարսից Փոքր Շահապասին եւ իշխանութեան Զուգայ քաղաքեղջիս Խօջայ Սարփրազին. ի քաղաքն Շօշ, որ կոչի Ըսպահան»:

Այս նոյն թուականէն ձեռագիր աւետարան մըն ալ կը գտնենք Վասպուրականի Լաւրայեան ձեռագրաց ցուցակին մէջ, թիւ 393, ուր զրուած է. «Ի քաղաքն Շօշ, որ է Ըսպահան, ի գեղալ Զուգայ. ընդ հովանեաւ սրբազան... ձեռամբ Բարսեղ քահանայի. ի թուականութեան ՌՃԳ (1654) (աւարտման թուականը նաեւ յիշատակարանին ՌՃԳ, 1655: Յ. Ք.) ի հայրապետութիւն տեառն մերոյ Փիլիպպոսի կաթողիկոսի, եւ մերոյ աթոռոյս քաջ բարունապետի, եւ ի թագաւորութեան փոքրիկ Շահապասին, եւ մերոյ յերկրակալութեանս պարոն Սարփրազին»:

Տէր Յովհաննեանց մեղի կուտայ այժմ կորսուած Աստուածաշունչի մը յիշատակարանը, զրուած 1655-ին՝ «Ի թագաւորութեան փոքր Շահապասին եւ ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ, եւ իշխանաշուք Պարոնաց Պարոնին Խօջայ Սարփրազին»: (էջ 2, Բ. մաս):